



Չարթըր Քըմինհիքեյշընզ ընկերությունը վերջերս տեղեկացուց Հորիզոն հայկական Հեռատեսիլի տնօրէնութեան, որ երկու տասնամեակէ աւելի հայ համայնքին իր ծառայութիւնը բերած կայանը Փետրուար 19ին պիտի հանուի ընկերութեան կայաններու ցուցակէն:

Այս ցնցող ու միակողմանի որոշումը, առնուած ընկերութեան մը կողմէ, որ կը տնօրինէ Կլէնտէյլի, Պըրպանքի, Լա Քրեսենթայի, Լա Քանիատայի, Փասատինայի եւ Սան Կապրիէլ Հովիտի քապելային կայաններու համակարգը, պիտի զրկէ իր յաճախորդները համայնքի իրադարձութեանց մասին վստահելի տեղեկութիւններ ստանալու կարելիութենէն, այնպիսի կարելոր ժամանակաշրջանի մը, երբ Պըրպանքի, Կլէնտէյլի, Լոս Անճելըսի եւ շարք մը այլ հարեւան քաղաքներու մէջ շուտով տեղի պիտի ունենան քաղաքային ընտրութիւններ:

Հորիզոն Հայկական Հեռատեսիլի տնօրէնութիւնը Չարթըր ընկերութեան այս քայլը կը նկատէ անարդար՝ իր յաճախորդներուն վնասող գործողութիւն: Ղեկտնմբերի սկզբին Հորիզոնի տնօրէնութիւնը համաձայնած էր յայտագիրը շարունակելու Չարթըրի նոր պայմաններուն: Նոր Տարիէն առաջ, նախքան կայանէն դուրս հանուելու մասին տեղեկացուիլը, Հորիզոն կատարած էր իր բոլոր նիւթական պարտաւորութիւնները:

Հորիզոն Հեատեսիլը իր առաջին ծրագիրը սփռած էր 1989ին հայ համայնքին ծառայելու եւ զայն միշտ տեղեկացուած պահելու առաքելութեամբ: Շուտով Հորիզոն դարձաւ օրէ օր մեծցող հայ համայնքի ձայնը արտայայտող միջոց մը: 1999ին Հորիզոն ընդարձակեց իր ծրագիրները եւ դարձաւ տեղւոյս հայ համայնքի մէջ գործող առաջին ամբողջօրեայ հեռատեսիլի կայանը, որ համագործակցելով հայկական կազմակերպութիւններու եւ առեւտրական շրջանակներու հետ իր դիտողները հանգամանօրէն իրազեկեց հայկական իրադարձութիւններու մասին: Անցեալ 14 տարիներուն Հորիզոն առանցքային դեր ունեցած է Հարաւային Քալիֆորնիոյ մէջ հայկական հեռատեսիլի ծրագիրներու ընդլայնման:

Չարթըր ընկերութեան այս քայլը կարելի է միայն բնութագրել իբրեւ ճնշում՝ գործադրուած ոչ-շահութաբեր կազմակերպութեան մը վրայ, որու նպատակը հայ համայնքին ծառայելն է: Այս քայլը արհամարհանք է ուղղուած Կլէնտէյլի, Պըրպանքի եւ շրջակայ քաղաքներու հայ հաւատարիմ յաճախորդներուն՝ անզգայութիւն անոնց հանդէպ:

Մենք վստահ ենք, որ Հորիզոն դիտողներուն պիտի միանան մեր համայնքի մէջ գործող կազմակերպութիւնները, ղեկավարները եւ գործարար շրջանակը եւ միասնաբար պիտի արտայայտեն իրենց յուսախաբութիւնն ու զայրոյթը ուժի այս կամայական կիրարկման դէմ, որ միայն կը հետապնդէ մեր կենսունակ համայնքի ձայները լրեցնելու նպատակը:

Յառաջիկայ օրերուն, Հորիզոն եւ համայնքի ներկայացուցիչներէն կազմուած յատուկ աշխատանքային խումբ մը պիտի հրապարակէ իրաւական եւ այլ քայլերու ծրագիր մը՝ ոչ միայն պահպանելու Հորիզոն Հայկական Հեատեսիլի կայանը, այլ ընդարձակելու անոր հասողութիւնը դէպի հարեւան շրջաններ, ինչպէս նաեւ առաւել ճոխացնելու իր յայտագիրները՝ գործակցելով հայկական ծրագրեր պատրաստողներու հետ: